

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/3

9 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Մարինա Բարսեղյանի 30.07.2014 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 09.06.2014 թ-ի թիվ 632 որոշման դեմ:

Քաղաքացի Մարինա Բարսեղյանի բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 09.06.2014 թ-ի որոշմամբ Մարինա Բարսեղյանից գանձման է առաջադրվել հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումար (ներառյալ տույժեր, տուգանքներ):

Ըստ հարկային մարմնի, հարկային պարտավորություններն առաջացել են 2012 թ-ի 3-րդ եռամսյակի ընթացքում ԱԱՀ-ով հարկվող գործարքից: Թեև որոշման մեջ նշված չէ, այնուհանդերձ տեղեկացվում է, որ հարկային մարմինը որպես հարկային պարտավորությունների առաջացման հիմք ընդունել է այն հանգամանքը, թե բողոքաբերը մեկ տարվա ընթացքում երկու անգամ տրանսպորտային միջոց է օտարել:

Վարչական վարույթի ընթացքում, հարկային մարմնին բազմիցս բանավոր ներկայացվել է իրականությունը, որը հետևյալն է.

Մարինա Բարսեղյանն օտարել է սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցը, որպեսզի գնի նորը: Նոր տրանսպորտային միջոցը գնել է «Սուզուկի»-ի պաշտոնական ավտոսալոնից: Սակայն, որոշ ժամանակ անց, մեքենայի հետ խնդիրներ են առաջացել և այն վերադարձվել է վաճառակետ, որպեսզի վերանորոգեն կամ փոխարինեն:

Որաշակի գումար ավելացնելու պայմանով, մեքենան փոխարինել են լրիվ նոր ավտոմեքենայով: Այսինքն, բողոքաբերն օտարել է իր ավտոմեքենան, սալոնից գնել նորը, որի վատ աշխատելու պատճառով այն վերադարձրել է սալոն և փոխարինել մեկ այլ մեքենայով: Հետևաբար, բողոքաբերն ընդամենը մեկ անգամ է օտարել մեքենա և մեկ անգամ էլ գնել մեքենա: Սակայն հետագայում պարզվել է, որ այն մեքենան, որն առաջին անգամ օտարել էին բողոքաբերին, մեկ անգամ արդեն վաճառված և հետ էր վերադարձված և վաճառողն այն չէր ձևակերպել իր անունով, և նախկին գնորդից լիազորագիր էր վերցրել և այդ լիազորագրով մեքենան վաճառել էր բողոքաբերին: Որից հետո, երբ արդեն խոտանված մեքենան վերադարձվել է, վաճառողն այս դեպքում նույնպես մեքենան փոխարինելու փոխարեն, լիազորագիր է վերցրել բողոքաբերից այդ մեքենան վաճառելու համար (և հետագայում վաճառել է, որն էլ հարկային մարմինը դիտել է որպես երկրորդ վաճառք) և նոր առուվաճառքի պայմանագրով նոր մեքենա է օտարել բողոքաբերին:

Սույն բողոքի հանգամանքները հիմնավորվում են հենց այն պարզ պատճառով, որ մեքենան գնվել է սալոնից, սակայն առուվաճառքն իրականացվել է ֆիզիկական անձանց միջև, սալոնի աշխատակիցներին տրված լիազորագրերով:

Այս ամենի վերաբերյալ հարկային մարմինը տեղեկացվել է, սակայն իր որոշմամբ այդ փաստերին չի անդրադարձել, բողոքաբերի դիրքորոշումներին և ներկայացրած ապացույցներին որևէ գնահատական չի տրվել, որպես վարչական մարմին, չի փորձել պարզել եղելությունը, չի փորձել բացատրություններ և ապացույցներ պահանջել գործարքի կողմ հանդիսացող վաճառողից, չի փորձել պարզել, թե ինչու է վաճառողը մեքենայի փոխարինման փոխարեն առուվաճառք ձևակերպել և ուղղակի հաստատված է համարել մի բան (երկու անգամ մեքենա օտարել), որն իրականում գոյություն չունի: Այսինքն, վարչական մարմինը չի կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները, բազմակողմանի

քննություն չի իրականացրել, չի բացահայտել նաև վարույթի մասնակցի օգտին անկա հանգամանքները, և հաշվարկելով գոյություն չունեցող հարկային պարտավորություններ, կայացրել է առարկայագուրկ որոշում՝ գոյություն չունեցող հարկային պարտավորությունները գանձելու համար: Ավելին, որոշումը ստանալուց անմիջապես հետո բողոքաբերը փորձել է ձեռնամուխ լինել վարչական վարույթի նյութերը ստանալու և ծանոթանալու համար, սակայն դիմումները մնացել են անպատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է քննության առնել բողոքը և վերացնել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 09.06.2014 թ-ի թիվ 632 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ում առակա տեղեկությունների համաձայն քաղաքացի Մարինա Բարսեղյանը 2012 թ-ի ընթացքում երկու անգամ իրականացրել է սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի (ավտոմեքենա) օտարման գործարք: Մասնավորապես, 1-ին ավտոմեքենան օտարվել է 04.07.2012 թ-ին 1.500.000 ՀՀ դրամով, իսկ 2-րդ ավտոմեքենան՝ 09.07.2012 թ-ին 7.000.000 ՀՀ դրամով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն քաղաքացու կողմից իրականացված երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը հանդիսանում է ԱԱՀ-ով հարկվող գործարք, հետևապես Մարինա Բարսեղյանի կողմից իրականացված գործարքի (2-րդ ավտոմեքենայի օտարում) մասով 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար պետք է ներկայացվեր ԱԱՀ-ի հաշվարկ: Սակայն չնայած այն հանգամանքին, որ Մարինա Բարսեղյանը ծանուցվել է հարկային տեսչություն հաշվարկներ ներկայացնելու և դրանից բխող հարկային վճարումները կատարելու վերաբերյալ, նրա կողմից 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար ԱԱՀ-ի հաշվարկ չի ներկայացվել և համապատասխան վճարումներ չեն կատարվել: Արդյունքում, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ հոդվածների դրույթներով հաշվարկվել է Մարինա Բարսեղյանի ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունը, որը կազմել է ընդամենը 2.972.678 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից ընդունվել է 09.06.2014 թ-ի թիվ 632 որոշումը Մարինա Բարսեղյանից 2.972.678 դրամ գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Մարինա Բարսեղյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, քանի որ 09.07.2012 թ-ին 2-րդ անգամ օտարվել է նույն տեսակի գույք՝ ավտոմեքենա, իսկ 2-րդ գույքի օտարումը կատարվել է այդ ավտոմեքենայի ձեռքբերմանը հաջորդող 1 տարին չգերազանցող ժամանակահատվածում: Հետևապես Մարինա Բարսեղյանն իրականացված գործարքի մասով 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար պետք է ներկայացնեի ԱԱՀ հաշվարկ և հայտարարեի ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունը:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդումներին, որ երկրորդ մեքենան ոչ թե օտարվել է, այլ անսարք լինելու հետևանքով փոխարինվել է նորով, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ սույն գործում առկա չեն համապատասխան ապացույցներ, որոնք կհիմնավորեին օտարման գործարքի փոխարեն փոխանակման գործարքի իրականացումը: Նման պայմաններում այլ որոշում, քան ընդունվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 09.06.2014 թ-ի թիվ 632 որոշմամբ, ըստ էության, չէր կարող ընդունվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 09.06.2014 թ-ի թիվ 632 որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

